

CLIMBING THE MOUNTAIN-ՀԱՅ.-ԹՐԹԱԿԱՆ ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆ

Posted on November 8, 2012 by Keghart



Category: [Opinions](#)



Մեր Փրկութիւնը Նաև Մեր Արժանապատուութեան

և Պատմական Յիշողութեան Մէջ Է

Դոկտ. Ժիրայր Քոչարեան, Բեռլին, Հոկտեմբեր 2012

Հայ-թրքական համերգ, հայ-թրքական միջոցառում, ցուցահանդես, երկխոսութիւն... Տեղատարափ Է Բեռլինում, մի բան, որ կամ միւս երկրներում տեղի չի ունենում և կամ հայ մամուլը չի անդրադառնում:

Մենք անգամներ յիշեցրել ենք, թէ այս բոլորը մակերեսային են և թուրք լայն հասարակութեանը ոչ յուզում է և ոչ էլ հետաքրքրում (յատկապէս Գերմանիայի շուրջ երեք միլիոն թրքական ծագում ունեցող բնակիչներին):

Երբ յիշում ես, որ շուտով լրանալու է ցեղասպանութեան 100-ամեակը, զարմանում ես ու տարակուսում, թէ արդյո՞ք մեր ժողովուրդը պատմութիւնից դասեր չի քաղել:

Մեր Փրկութիւնը Նաև Մեր Արժանապատուութեան

և Պատմական Յիշողութեան Մէջ Է

Դոկտ. Ժիրայր Քոչարեան, Բեռլին, Հոկտեմբեր 2012

Հայ-թրքական համերգ, հայ-թրքական միջոցառում, ցուցահանդես, երկխոսութիւն... Տեղատարափ Է Բեռլինում, մի բան, որ կամ միւս երկրներում տեղի չի ունենում և կամ հայ մամուլը չի անդրադառնում:

Մենք անգամներ յիշեցրել ենք, թէ այս բոլորը մակերեսային են և թուրք լայն հասարակութեանը ոչ յուզում է և ոչ էլ հետաքրքրում (յատկապէս Գերմանիայի շուրջ երեք միլիոն թրքական ծագում ունեցող բնակիչներին):

Երբ յիշում ես, որ շուտով լրանալու է ցեղասպանութեան 100-ամեակը, զարմանում ես ու տարակուսում, թէ արդյո՞ք մեր ժողովուրդը պատմութիւնից դասեր չի քաղել:

Եվ ինչո՞ւ է այս բոլորը կատարվում Գերմանիայում և յատկապէս Բեռլինում: Խնդիրը հասկանալի է: Գերմանիան առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի դաշնակիցն էր ու մեղսակիցը: Օժանդակեց երիտթուրք-պարագլուխների փախուստը Բեռլին և Նրաց ջանձնեց Կ. Պոլսոյ ռազմական արտակարգ ատեանին (1919-1920), որտեղ նրանք հեռակա կարգով մահապատժի էին ենթարկուել... Եվ այսօր էլ Գերմանիան շարունակում է Թուրքիայի դաշնակիցը մնալ: Չմոռանանք նաև, որ Գերմանիայի արտգործ նախարարութիւնն էր վերը նշվածի կազմակերպիչը: Այդ անցեալում, իսկ այսօր հայ-թրքական «երկխոսութիւնների» հովանաւորողն ու ֆինասաւորողն է: Գերմանիայի Դաշնային Հանրապետութիւնը ցայսօր Հայոց ցեղասպանութիւնը որպէս այդպիսին չի ճանաչել:

Եթե գերմանացիները հոլոքոստը չճանաչեին, չդատապարտեին և հատուցում չլնարեին, հրեաները պատրաստ կլինեի՞ն գերմանացիների հետ միասնաբար ելոյթներ ունենալ: Իրականութիւն է, որ Թուրքիան ցեղասպանութիւնը ժխտում է, մեր հայրենիքի մեծ մասը բռնագրաւել է, կործանում է հայկական ճարտարապետական կոթողները, թրջացրել է բոլոր հայկական աշխարհագրական անունները... օրնիբուն լուտանք է տեղում հայ ժողովրդի գլխին և կանգնած է իր արինակից ադրբեյջանի կողքին: Հայ անունը Թուրքիայում հաւասար է դաւաճանի ու ենթարկվում է արհամարհանքի:

Բեռլինի հայ եկեղեցական միութեան երգչախումբը երկու տարի առաջ ընկաւ «անադոլու քյուլթուր» կազմակերպութեան ծուղակը և թուրքերի հետ միասնաբար ելոյթ ունեցաւ՝ կատարելով «թուրք-կոմիտասի» երգերից, ինչպէս ներկայացված էր վերը յիշուած կազմակերպութեան կայքէջում աւելացնելով «Երաժշտութիւնը, որ դուք վայելեցիք, Թուրքիայի հայ փոքրամասնութեան կորած մշակոյթի մասնիկներն էին, որոնց գտել, հավաքել և պահպանել է Մուստաֆա Զեմալը»:

Իհարկէ, այս միջոցառումների յայտագրութիւններում, մասամբ նաև ելոյթներում չի յիշուած հայոց ցեղասպանութեան, բռնագաղթի և կամ խլուած հայրենիքի մասին: Յաճախ գերմանացի այցելուները զարմացած հարց են տալիս, եթէ այսպիսի սիրալիր յարաբերութեան մէջ են հայերն ու թուրքերը, ապա ինչու՞ սահմանները առ այսօր փակ են:

Ինդիրը աւելի պարզաբանելու համար, Ձեր ուշադրութեանն ենք հրաւիրում, մեր բողոք նամակը՝ հասցեագրուած «Եւրոպական ակադեմիային և Ֆ. Նաուման հիմնադրամին»:

.....

Friedrich Naumann-Stiftung für Die Freiheit
Karl-Marx-Straße 2
14482 Potsdam

Europäische Akademie Berlin
Herrn Prof. Dr. Eckart D. Stratenschulte
Bismarckallee 46/48
14193 Berlin

«Climbing the Mountain-հայ.-թրքական երկխոսութիւն», 04.09.2012

Յարգելի Տիկնայք և Պարոնայք,
Շատ յարգելի Պարոն Պրոֆ.Դոկտ. Շթռաթենշուլթէ,

Դեռևս ամիս էլ չի անցնում, որ «չբախտաւորւենք» հայ-թրքական համերգ, հայ-թրքական ցուցահանդէս կամ ինչպէս հիմա՝ Ֆրիդրիխ Նաուման հիմնադրամի կազմակերպած հայ-թրքական երկխոսութեամբ:

Միայն թէ այս ամենը արտաքին խաբկանք է: Իրականութեան մէջ այս միջոցառումները որևէ ազդեցիկ դաստիարակչական նշանակութիւն չունեն, իսկ այս երկխոսութիւնը բնաւ էլ չի

Ներկայացնում Թուրքիայի մեծամասնության կարծիքը հայերի և Հայաստանի նկատմամբ:

Ֆ.Նաումանի հաստատության վերջին միջոցառումը բացառութիւն չի կազմում, յատկապէս, որ երկխոսութիւնը իրականացնում են երկու կանայք, որոնցից մէկը հայուհի է, իսկ միւսի տատն է եղել հայուհի: Նա պատկանում է հայ երեխաների այն խմբին, որը 1915թ.իւլետլով իրենց մայրերից՝ բռնությամբ ստիպել են դառնալ թրջական ընտանիքների «անդամներ»:

ՄԱԿ-ի ցեղասպանության հանցագործութիւնները կանխելու և դրա համար պատժի մասին քննվեցիան (1948) երեխաների յանձնումը մարդկային մի խմբից միւսին համարում է ցեղասպանության հանցագործության հինգ բաղկացուցիչ մասերից մէկը:

Այս առնչութեամբ պետք է նշել, թէ նրանք, ովքեր Թուրքիայում հայկական ծագում ունեն, գտնուում են հասարակության եզրում և կարծիք արտայայտելու իրաւունք չունեն, սակայն պաշտօնեաների և դիւանագետների կողմից նրանց ժամանակ առ ժամանակ խօսք է տրվում ցուցադրելու արտասահմանին Թուրքիայի մեծահոգութիւնը փոքրամասնութիւնների նկատմամբ:

Եւ ինչու՞ պիտի ամեն անգամ յատկապէս տիկին Չեթինը ներկայանայ որպէս «ալիբի-թրքուհի»: Այս շատ բարձր գնահատելի տիկինը բնաւ էլ թուրք հասարակայնության մեծամասնութեանը բնորոշ ներկայացուցիչ չէ: Այդ մեծամասնութիւնը, լինի այդ Թուրքիայում թէ Ադրբեյջանում, բնաւ էլ իրեց ինքնութիւնը չեն կապում իսլամացած-թրջացած հայուհիների շառաւիղների, այլ անցեալի և ներկայիս ոճրագործների հետ: Ասածիս վառ ապացույցն է փողոցների, հրապարակների, դպրոցների, կամուրջների, գրադարանների և մինչև անգամ մզկիթների անվանակոչումը ցեղասպանության գլխաւոր ոճրագործների անուններով, դրանց շարքում նաև՝ Թալաթի:

Եւրոպական Ակադեմիայի և Ֆ. Նաումանի հիմնադրամի կողմից կազմակերպուած միջոցառման ծանուցման մէջ, առկայ էին երկու մոլորացնող հանգամանքներ, որտեղ գրուած էր «1993թ. սկսեալ Հայաստանի և Թուրքիայի սահմանները փակել են, որով և երկու երկրների յարաբերութիւնները խախտուած են: Մի՞թէ Դուք անուանում էք այդ քաղաքական կրթութիւն»: Ինչու՞ և այսքան տարտամ:

1993-ին Թուրքիան միացաւ Ադրբեյջանի՝ 1989-ից սկսած Հայաստանի շրջափակմանը՝ հակառակ ժողովրդների միջազգային իրավունքներին:

Մարդկութիւնը դատապարտել է երկու շրջափակումներ՝ Երկրորդ Համաշխարհային պատերազմի օրօք Լենինգրադի և յետպատերազմական ժամանակաշրջանում Բեռլինի շրջափակումները, նոյն մարդկութիւնը սակայն անտարբեր է ամբողջ մի երկրի՝ Հայաստանի շրջափակման նկատմամբ, այն էլ 19 տարիներից ի վեր:

Նաև Դուք էք խուսափում շրջափակմանը կամ ցեղասպանութեանը իրաւաբանական լուրջ գնահատական տալուց:

Երբ Դուք Ձեր յայտագրի ծանուցման մէջ խօսում էք «ընդունել նոր տեսահորիզոններ», բնաւ էլ չէք ենթադրում, թէ թուրքերը վերջապէս ճանաչելու են Օսմանեան սուլթանութեան 3.5 միլիոն

քրիստոնեաների ցեղասպանութիւնը (1914թ. վիճակագրութեան համաձայն Փոքրասիայում ապրում էին 5 միլիոն քրիստոնեաներ), այլ սպասում էք, թէ հայերը ցեղասպանութեան ճանաչման և հայրենիքի իրաւունքների պահանջից հրաժարւեն, որպէսզի մենք դարձեալ ոչ մի բան չպարտաւորեցնող երկխօսութեամբ ուրախանալ կարողանանք:

Բերենք Անքարայի Թալաթ փաշայի նորակառոյց շքեղ մզկիթը որպէս օրինակ: Թուրքը, որ աղօթում է այդ մզկիթում կամ անտեսում է, թէ ում անունն է կրում այն և կամ լաւ տեղեակ է և յատկապէս դրա համար է գնում այնտեղ՝ աղօթելու: Ընդհանրապէս իմաստ ունի՞ ցեղասպանութիւնից հրաշքով վերապրած սերունդների ժառանգները այսպիսի թուրքերի հետ (և մենք խօսում ենք մեծամասնութեան մասին) «երկխօսութեան» մէջ մտնեն:

Ինչո՞ւ պիտի հայերը մարդկանց հետ խօսեն, որոնք նրանց «դավաճաններ» են անվանում և մեղադրում հարիւր հազարաւոր մուսուլմանների (թուրքերի) կոտորածների համար և նպատակադրած հայոց մշակոյթի յուշարձանները ոչնչացնում, աշխարհագրական անվանումները թրքացնում, իսկ «հայ» բառը գործածում են մէկին ամենաահավոր վիրավորանք հասցնելու համար: Ռամիլ Սաֆարովը, որը Բուդափետստում նատոյի միջոցառման պահին (գործընկերութիւն խաղաղութեան համար 2004թ.), հայ համակուրսեցուն քնի մէջ կացնի 16 հարուածներով սպանել և միւս հային վիրավորել էր, վարակուած էր Թուրքիայում պանթուրքիստական ոգով, որտեղ նա 1992-2000թթ. ստացել էր իր զինւորական կրթութիւնը:

Բնորոշ է, որ այս անգութ խոշոր ոճրագործը իր հայրենիքում Ադրբեյջանում օրինակելի ազգային հերոսի մակարդակին է բարձրացւում, ներման է շնորհւում իր երկրի նախագահի կողմից, զինւորական բարձր կոչում է ստանում ինչպէս նաև հասարակական յարգանքի է արժանանում: Այնքան ժամանակ, քանի դեռ մարդասպանները կացինով են շրջում, ի՞նչ երկխոսութեան մասին է խօսքը:

Ձեր պարտականութիւնը չէ արոյ՞օք որպէս Օսմանեան սուլթանութեան նախկին դաշնակիցի շառավիղներ զբաղուէիք թուրք ու ադրբեյջանցի մեծամասնութեան հետ: Յատկապէս նկատի առնելով Ֆրիդրիխ Նաումանի* խիստ հակահայկական արտայայտութիւնները, որի անունն է կրում Ձեր հիմնդրամը:

Ձեր պարտականութիւնը չէ՞ տեղեկատուական աշխատանք տանել գոնէ Գերմանիայի թրքական ծագում ունեցող բնակչութեան մէջ՝ նրանց մասնակից դարձնելով իրենց իսկ սեփական պատմութեանը:

Ամփոփում: Ոչ մի բանով չպարտավորեցնող, ամերևոյթ երկխօսութեամբ, այն էլ համարեայ նոյն կարծիքի տեր զոհի ժառանգների միջև, որևէ արոյունքի չէք հասնելու: Սկսեք աշխատել արոյունաւէտ, դիմէք ատելութեամբ լեցուն թրքական համայնքներին, Գերմանիայում և արտասահմանում: Օրինակի համար դիմէք Նոյքետօլի «շեհիդիք-մզկիթի»** միութեանը և զբաղւէք նրանց ցեղասպանութեան պարագլուխների, անձի տարօրինակ պաշտամունքի հետ առնչվող հարցերով, եթէ իհարկէ դրա քաջութիւնը ունենաք: Մի ստիպեք շարունակ ցեղասպանութիւնից հրաշքով վերապրած մարդկանց ժառանգներին անիմաստ մասնակցել

«Երկխոսութեան»:

Յարգալից բարևներով՝

Դոկտ. Ժիրայր Քոչարեան

* Ֆրիդրիխ Նաումանը (1860-1919) աստուածաբան, դիվանագետ պատկանում էր այսպես կոչուած «լիբերալ-իմպերիալիստների» խմբին, ցանկանում էր մեծ ու հզօր Թուրքիա, որպէս Գերմանիայի դաշնակից: Հայերն ու հայկական հարցը խոչնդոտում էին այդ դաշնակցութեանը (տես նրա հեղինակած գիրքը, Asia, Berlin-Schöneberg, 1899): Նա դէմ էր Յ. Լեփսիուսին և նրա գործընկերներին:

** Տրապիզոնի դահիճ Ջեմալ Ազմին, Դոկտ. Բեհաեդին Շաքիր և Թալաթը թաղուեցին Բեռլինի Նոյքեօլն շրջանի Քոլումբիադամի թրքական գերեզմանոցում: 1943թ. Մարտին Թալաթի դին տեղափոխւեց Կ. Պոլիս, Թուրքիայում Գերմանիայի դեսպան Ֆրանց Ֆոն Փափնի օժանդակութեամբ և ներկայութեամբ: Վերջերս այդ գերեզմանոցում կառուցւել է մի շքեղ մզկիթ՝ «շեհիտներ» անուանով (մարտիրոսների մզկիթ), ինչպէս նաև նորոգւել են Բեռլինի թուրք աշխատաւորների դրամական օժանդակութեամբ, շքեղ մարմարով այդ երկու ոճրագործների գերեզմանները, որով էլ սկսւել է արդէն նաև Թուրքիայի սահմաններից դուրս այս երկու հանցագործների նկատմամբ անձի պաշտամունք:

